

Արձանագրություն N14

2025 թվականի մարտի 26-ին ժամը 15.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

Նիստը մեկնարկեց ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանի ողջույնի խոսքով: Վերջինս, շնորհակալություն հայտնելով մասնակիցներին, կարևորել է այս ձևաչափով քննարկումների անցկացման կարևորությունը՝ հաշվի առնելով, որ կան բազմաթիվ բարեփոխումներ, հետաքրքիր նախաձեռնություններ, որոշումներ, որոնք պետք է լինեն ուշադրության կենտրոնում: ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց նաև, որ քննարկումը կազմակերպվելու է երկու առանցքային հարցերի՝ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի և շրջանառության հարկ վճարողների աջակցության միջոցառման շուրջ: Վերջինս առաջարկեց, որ նախ կարճ անդրադարձ կատարվի օրակարգի յուրաքանչյուր հարցին, որից հետո հարց ու պատասխանի միջոցով շարունակվի քննարկումը և վերջում ամփոփվի մտքերի փոխանակմամբ: Խորհրդի անդամները համաձայնություն տվեցին նշված մոտեցմանը:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը, անդրադառնալով օրակարգի առաջին հարցին, ներկայացրեց հանրության շրջանում իրականացվող լայնածավալ իրազեկման միջոցառումների, ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման ժամկետների, հայտարարագրի ներկայացման հարթակների առավել մատչելի դարձնելուն ուղղված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը: Մասնավորապես՝ նշվեց, որ այս տարի հայտարարագրման բարեփոխման ամենամեծ քայլը պետք է կատարվի: Նախնական գնահատականներով 700 հազար և ավելի քաղաքացի պետք է ներկայացնի հայտարարագիր: Վերջինս նշեց, որ հայտարարագրի ներկայացման ժամկետը նախատեսվում է հետաձգել մայիսի 1-ից նոյեմբերի 1: Նշվեց նաև, որ հայտարարագրման համակարգի հետ կապված մի շարք ուղղություններով իրականացվել են

գործողություններ: Առաջին խումբ գործողություններն ուղղված են եղել իրազեկմանը: Լայնածավալ իրազեկման արշավներ են իրականացվում, մասնավորապես՝ մարզային իրազեկման արշավներ, խոշոր կազմակերպություններում իրազեկման արշավներ, սպասարկման սրահներում փոքր կազմակերպությունների համար իրազեկման աշխատանքները, շաբաթական ռեժիմով իրականացվող լրատվական իրազեկումները: Նշվեց նաև, որ մշակվել են ուղեցույցեր և պաշտոնական կայք էջում կա առանձին «Հայտարարագրում» բաժին, որտեղ տեղադրված են ուղեցույցեր, հոլովակներ, իրազեկման թերթիկներ հայտարարագրման համակարգի վերաբերյալ: Թվայնացման տեսանկյունից որոշ գործողություններ են կատարվում համակարգի բարելավման ուղղությամբ: Ներկայումս աշխատանքներ են կատարվում նոր բջջային հավելվածի մշակման ուղղությամբ, որը հնարավորություն է տալու պարզ հարցերի միջոցով քաղաքացուն ուղեկցել հայտարարագրի լրացման ամբողջ ճանապարհին:

Վերջինս, անդրադառնալով արդյունքներին, նշեց, որ շուրջ 17233 քաղաքացի ներկայացրել է հայտարարագիր, իսկ 7200 քաղաքացի արդեն դիմել է սոցիալական ծախսի վերադարձի համար և կատարվել է 670 մլն դրամի սոցիալական ծախսի փոխհատուցում: ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ շաբաթական ռեժիմով հետևում են ցուցանիշներին, յուրաքանչյուր շաբաթ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացում կա: Իհարկե կան խնդիրներ և քննարկման հիմնական առանցքը պետք է լինի այդ խնդիրները բացահայտելը, բարձրաձայնելը, պարզաբանելը և միասին քննարկելը:

ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ հայտարարագրի ներկայացման ժամկետի երկարաձգման հետ կապված նախատեսվում է օրենսդրական փոփոխություն, ինչպես նաև այն դեպքերի համար, երբ անձը դիմել է նույնականացման քարտ ստանալու համար, սակայն ինչ-որ պատճառներից ելնելով չի ստացել և պատասխանատվություն չկիրառելու համար նախատեսվում են որոշակի կարգավորումներ: Վերջինս նշեց, որ 2024 թվականի սոցիալական ծախսի փոխհատուցման համար նախատեսվել է, որ պարտադիր չէ շահառուի կողմից վճարում կատարված լինելը, այլ կարևոր է իր միջոցներից կատարված լինելը, որը որևէ ձևով կարող են հայտնել ծառայություն մատուցողին, իսկ

հետագա տարիների համար, որպեսզի հայտարարագիր ներկայացրած անձն օգտվի սոցիալական ծախսի փոխհատուցումից պարտադիր պայման է իր կողմից վճարում կատարված լինելու հանգամանքը: Միաժամանակ, վերջինս խորհրդի անդամներին խնդրեց իրենք էլ այդ մասով իրենց հերթին իրազեկեն հանրությանը:

Խորհրդի անդամները օրակարգի առաջին հարցի վերաբերյալ բարձրացրեցին հետևյալ հարցերը.

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ. Համբարձումյանը, շնորհակալություն հայտնելով նիստի կազմակերպման համար, առաջարկեց, որ նիստերը անցկացվեն ավելի հաճախակի, օրինակ՝ ամիսը մեկ անգամ կամ եռամսյակային պարբերականությամբ: Հաջորդիվ, նշեց, որ շատ կարևոր գործիք է տրվել հանրությանը սոցիալական ցանցերով հայտարարագրման համակարգի վերաբերյալ հարց ու պատասխանի միջոցով իրազեկումների իրականացումը և խնդրեց թարմացնել այն: Միաժամանակ, հարցրեց, թե ինչու չի նախատեսվում լիազորված անձի միջոցով հայտարարագիր ներկայացնելու հնարավորություն: Հաջորդիվ հարցրեց, թե արդյոք նախատեսվում է օրենսդրական նախաձեռնություն բոլոր դեպքերում հայտարարագիր ներկայացնելու ժամկետը մայիսի 1-ից հունիսի 1 տեղափոխելու հետ կապված: Հաջորդ հարցը վերաբերում է սոցիալական ծախսի հետ կապված վճարողի մասով ներկայացված կարգավորմանը, որի մասով առաջարկեց, որ եթե նշվածը անցումային դրույթ է, ապա պաշտոնական կայքում կարող է տրվել իրազեկում և ոչ թե անհատական պարզաբանումներ, իսկ եթե ոչ, ապա որպես դրույթ նախատեսվի կառավարության որոշմամբ:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ խորհրդի նիստերն անցկացվում են եռամսյակային պարբերականությամբ: Ընդ որում, առաջարկվեց, որ կարելի է նախօրոք իրազեկել բոլորին, թե ինչ հարցերով, առաջարկություններով կարող են հանդես գան, կներկայացվեն նաև առաջարկներ և առավել հաճախ հանդիպող հարցերի շուրջ էլ կձևավորվի նիստի օրակարգը: Ինչ վերաբերում է լիազորման գործառույթի նախատեսմանը, նշվեց, որ վերջինս օրակարգային հարց է: Նախ առաջին քայլը նույնականացման հետ կապված հարցերի

մասով անհրաժեշտ է քննարկել լիազոր մարմնի հետ: Կան նույնականացման տարբեր մեխանիզմներ, ընտրվել է դրանից մեկը: Լիազորի հարցը շարունակում է մնալ օրակարգային: Քննարկման արդյունքներով կորոշվի լուծման տարբերակը: Բացի այդ, իրավական կարգավորման անհրաժեշտություն կա:

Հայտարարագրի ներկայացման ժամկետի հետ կապված՝ ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ այդ մասով նախատեսվում է ժամկետը մայիսի 1-ից տեղափոխել հուլիսի 1: Ինչ վերաբերում է անձի միջոցներից կատարված լինելու հանգամանքին, նշվեց, որ նախատեսվում է առավել հստակ կարգավորումները շարադրել կառավարության որոշմամբ, որից հետո համապատասխան իրազեկումներ կիրականացվեն: Քանի որ ներկայումս կառավարության որոշման մեջ առավել հստակեցման կարիք կա, այդ պատճառով էլ իրականացվում են անհատական իրազեկումներ: Ընդ որում, 2024 թվականի համար միջոցներով վճարման դրույթը կգործի մինչև կառավարության որոշման մեջ փոփոխությունը:

ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ հարց ու պատասխանի մասով կատարվել է թարմացում և եթե կան բացեր, կարող են նշել, որպեսզի թարմացվի: Նշվեց նաև, որ լիազորման գործառույթի հետ կապված կատարվել են որոշակի նախագծման աշխատանքներ:

«Իրազեկ հարկատու» ՀԿ նախագահ Ա. Մալխասյանը բարձրացրեց երկու հարց: Առաջին հարցը վերաբերում է ժամկետի հետաձգմանը: Հարցրեց, թե արդյոք ժամկետի հետաձգումը վերաբերում է նաև վճարմանը, թե միայն հաշվարկի ներկայացմանը: Երկրորդ, հարցրեց, թե արդյոք սոցիալական կրեդիտի հաշվարկային փաստաթուղթը սխալ դուրս գրելու հետևանքով նախատեսված է պատասխանատվություն, թե ոչ և ում վրա է դրված: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ նախատեսվում են վճարման ժամկետի հետաձգման մասով կարգավորումներ, որպեսզի տույժի հաշվարկման հարց չառաջանա: Ինչ վերաբերում է պատասխանատվությանը, նշեց, որ պատասխանատվության նորմով չի կարգավորվում: Սխալի բացահայտման դեպքում սոցիալական կրեդիտ ստացողը պարտավոր է

վերադարձնել ստացած գումարը: Ինչ վերաբերում է մեղավորությանը, ապա ծառայություն մատուցողը և քաղաքացին պետք է իրար հետ պարզաբանեն:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը հարցրեց, թե արդյոք արդեն իսկ ներկայացված հայտարարագրերի մասով տվյալները մշակվել և վերլուծվել են ու ինչ բացահայտումներ, եզրահանգումներ կան և դա ինչ է տվել պետությանը և մասնավորապես ՊԵԿ-ին:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ 2023 թվականի համար հայտարարագիր ներկայացնողները, քանի որ հիմնականում պետական համակարգի աշխատողներ են եղել, մեծ բացահայտումներ չկան: Նշվեց նաև, որ հայտարարագրման համակարգը հնարավորություն է տալիս պետությանը ճանաչել իր քաղաքացուն, ունենալ վիճակագրություն, թե եկամուտները ինչպես են բաշխված, որպեսզի տրամադրվող օգնությունները լինեն ավելի հասցեական: Բացի այդ, հայտարարագրման հարթակը լայն հնարավորություն էր վարձակալական շուկային հարկային դաշտ բերելու տեսանկյունից:

ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը հայտնեց, որ ինչպես հայտարարագրման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության քննարկումների ժամանակ է նշվել, հայտարարագրման համակարգը հարկային եկամուտների հավաքագրման գործիք չէ: Առաջինը, համակարգը նոր մշակույթի ներդրում է, որի միջոցով պետությունը փոխհարաբերվում է իր քաղաքացիների հետ: Կարելի է նշել, որ համակարգը ենթակառուցվածք է, որը թույլ է տալիս մարդկանց վերադարձնել գումար: Երկրորդ, հայտարարագրման համակարգի ներդրումն երկարաժամկետ բարեփոխում է, որի արդյունքները կարելի է ամփոփել ամբողջական ներդրումից որոշ ժամանակ հետո, երբ կունենան տվյալներ, վերլուծություններ, ինչպես նաև թե տարբեր ոլորտներում ինչպիսի քաղաքականություն է իրականացվել կրթության ոլորտում, առողջապահության և այլ ոլորտներում:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը հարցրեց, թե արդյոք պատրաստ է համակարգը այդքան ծավալի տվյալների մշակմանը, քանի որ հայտարարագիր մշակելը հեշտ չէ:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ կան ներդրված վերլուծական գործիքներ: Բացի այդ, նախատեսվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում, որը զբաղվելու է ֆիզիկական անձանց եկամուտների վերլուծությամբ: Նախատեսվում է նաև արհեստական բանականության գործիքների ներդրում:

ՎԶԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհուրդի ներկայացուցիչ Հ. Պատվականյանը հարցրեց, թե ինչու հնարավոր չէ հայտարարագիր ներկայացնելու համար «Ես եմ» համակարգում նույնականացվել անձնագրով և սոցիալական քարտով և արդյոք հնարավոր է հետագայում նախատեսվի անձնագրի և սոցիալական քարտի միջոցով նույնականացումը:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ նախ նույնականացման համակարգը ՊԵԿ-ի համակարգը չէ: Բացի այդ, պետական քաղաքականություն այնպիսին է, որ գնում են խիստ նույնականացման «Ես եմ» համակարգի միջոցով, ինչ-որ փուլում պետք է անցում կատարվեր նույնականացման քարտերին, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրության ակտիվացմանը: Ընդ որում, անվտանգության տեսանկյունից այդպես ավելի անվտանգ է :

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, թե արդյոք հնարավոր չէ ընտանիքի անդամների միջև փոխանցումների մասով նախատեսել որևէ կարգավորում, որպեսզի նշված փոխանցումների մասով նվիրատվություն դիտարկելու հարց չառաջանա: Հաջորդիվ, նշվեց, որ հայտարարագիրը օրենքային լեզվով է գրված, արդյոք հնարավոր չէ ավելի պարզ նախատեսել: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ սկզբնական շրջանում հարցը փորձել են լուծել նման գործարքների համար 300 հազար շեմ սահմանելու միջոցով: Նշվեց նաև, որ կարող են ներկայացվել առաջարկներ, որոնք կքննարկվեն լավագույն լուծումը գտնելու համար:

ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց ընդունում է, որ օրենքի լեզուն ընկալելի չէ մարդու համար, մասնագիտական լեզվով է գրված: Փորձ է արվել հնարավորինս օրենքի լեզուն պարզաբանել, մանրամասնել, սակայն այդ դեպքում էլ հնարավոր է առաջանան իրավական խնդիրներ: Դրա համար փորձել են ուղեցույցերի,

հարց ու պատասխանների միջոցով ավելի մանրամասն ներկայացնել հայտարարագրի լրացումը:

«Իրազեկ հարկատու» ՀԿ նախագահ Ա. Մալխասյանը հարցրեց, թե արդյոք արդեն նախատեսվել է կենսաթոշակային տվյալների ինքնաշխատ լրացում հայտարարագրում: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ արդեն նախատեսված է տվյալների լրացումը և մինչև տարեվերջ կնախատեսվի նաև մյուս հնարավոր տվյալների մասով լրացում:

Հաջորդիվ անդրադարձ կատարվեց օրակարգի 2-րդ հարցին՝ շրջանառության հարկ վճարողների աջակցության ծրագրին, որի վերաբերյալ ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ շրջանառության հարկի դաշտում գործող առք ու վաճառք իրականացնող տնտեսվարողները կառավարության որոշման համաձայն կստանան աջակցություն, քանի որ նախորդ տարի կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում շրջանառության հարկի դրույքաչափերի բարձրացմամբ պայմանավորված՝ նախկին ձեռք բերումներ ունեն հարկ վճարողները, որոնք չեն հասցրել իրացնել: Աջակցությունից օգտվելու համար տնտեսվարողները հարկային մարմին պետք է ներկայացնեն այս տարվա հունվարի 1-ի դրությամբ ապրանքային մնացորդի մասին տեղեկություններ:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ. Համբարձումյանը, հարցրեց, թե ինչու պետք է ներկայացվի ապրանքային մնացորդի մասին տեղեկություններ, քանի որ հարկի հաշվարկման հետ կապված չէ: Նշված տեղեկություն ներկայացնելու հանգամանքով պայմանավորված՝ շատ հարկ վճարողներ կնախընտրեն չօգտվել աջակցությունից, որպեսզի չգույքագրեն ապրանքային մնացորդը և չներկայացնեն հարկային մարմին: Հաջորդիվ հարցրեց, թե արդյոք հնարավոր չէր աջակցության ծրագիրը նախատեսել նաև արտադրական գործունեություն իրականացնողների համար:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ ապրանքային մնացորդները աջակցության հաշվարկին չեն մասնակցում, սակայն անուղղակիորեն ազդեցություն ունեն հաշվարկմանը և դիսկերի սահմանափակմանը: Բացի այդ, տեղեկատվությունը ներկայացնելու պահանջը դրվեց, որպեսզի հետագայում

հսկողության և վերահսկողության գործիք ունենան: Նշվեց նաև, որ նախ օրենքի պահանջն է, որ պետք է գույքագրվի ապրանքային մնացորդը:

Ինչ վերաբերում է արտադրական գործունեություն իրականացնողների համար աջակցության ծրագրի նախատեսմանը, նշվեց, որ արտադրության մասով քննարկվել են հարցերը, բայց եկել են այն եզրահանգման, որ նշված ոլորտի համար դեպքերը շատ բացառիկ կլինեն, քիչ կլինեն, որ նախկինում ձեռք բերված հումքի մասով լրացուցիչ հարկեր առաջանան: Ուստի ձեռնպահ են մնացել արտադրության ոլորտի մասով աջակցության նախատեսումից:

ՎԶԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհուրդի ներկայացուցիչ Հ. Պատվականյանը նշեց, որ իր հարցը աջակցության ծրագրին չի վերաբերում, այլ շրջանառության հարկ վճարողների կողմից ծախսագրման խնդիրներին: Նշվեց, որ իրացման ծախսերի մասով օրենսգրքով նախատեսված ձևակերպումը շատ ընդհանրական է: Նշվեց նաև, որ առկա է տեղեկատվական բաց: Անհրաժեշտ է պարզաբանումների, իրազեկումների միջոցով տեղեկացնել հարկ վճարողներին, քանի որ քննարկումների, հանդիպումների ժամանակ պարզվում է, որ շատերը տեղյակ չեն ծախսերի նվազեցման հնարավորության մասին: Կան բազմաթիվ հարցեր, որոնք ենթակա են պարզաբանման, օրինակ՝ վարձակալության, աշխատավարձի հետ կապված և այլն: Միաժամանակ, նշվեց, որ տեղեկատվական բացը կարող է բերել ինֆլացիոն ճնշումների: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ նախատեսվում է, որ վարչական ծախսերի մասով ևս նվազեցում կատարելու հնարավորություն: Ինչ վերաբերում է իրազեկմանը, օրենսդրական նախաձեռնության ընդունումից հետո կիրականացվեն համապատասխան իրազեկումներ:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, որ շրջանառության համակարգի այս մոդելը, որով նախատեսվում է ծախսերի նվազեցում տարբերվում է ծախսերի հաշվառման գործող մեթոդներից: Հայտնի է ծախսերի հաշվառման հաշվեգրման մեթոդը և որոշ դեպքերում էլ կիրառվում է դրամարկղային մեթոդը: Տվյալ պարագայում նախատեսվել է մեկ այլ մոտեցում: Այն է, որ ամսաթվով, որ դուրս է գրվել հաշվարկային փաստաթուղթը այդ հաշվետու ժամանակաշրջանում էլ

ծախսագրվում է: Հարցրեց, թե ինչու է ընտրվել այս մեթոդը և արդյոք հնարավոր չէր կիրառել հաշվեգրման մեթոդը:

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Օ. Ալավերդյանը նշեց, որ հաշվի առնելով, թե հարկ վճարողների, որ շրջանակի հետ գործ ունեն ընտրվել է այդ տարբերակը խուսափելու համար այնպիսի խնդիրներից, ինչպիսին է օրինակ, թե տվյալ ծախսի մասով նվազեցումը որ հաշվետու ժամանակաշրջանում կատարեն և նմանատիպ այլ հարցերից: Բացի այդ, շրջանառության հարկ վճարողները ծախսերի նվազեցման մասով առավել ծանոթ են նշված մոտեցմանը:

Նիստի վերջում, օրակարգին համապատասխան՝ խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին հարկային և մաքսային վարչարարությանն առնչվող հարցեր:

«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ ներկայացուցիչ Մ. Կոստանդյանը հարց բարձրացրեց նույնականացման միջոցներով՝ Դատա մատրքիս երկչափ շտրիխ կոդով ապրանքների դրոշմավորման հետ կապված: Մասնավորապես՝ նշվեց, որ շարժիչային յուղերի դրոշմավորման հետ կապված առնչվել են հետևյալ խնդրին. եվրոպական երկրներից ներմուծված մեծ տարաներով յուղերի համար նույնականացման միջոց ստանալու համար պահանջվում է շտրիխ կոդ, որն արտադրողը չի տրամադրում: Անհրաժեշտ է գրանցվել «Ջի Էս1(GS1)» համակարգում և վճարել 260 հազար դրամ: Հարցրեց, թե արդյոք նման դեպքերի համար հնարավոր է նախատեսել արտոնություն:

ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ նույնականացման միջոց ստանալու համար ապրանքը նախ պետք է գրանցված լինի համակարգում և ունենա շտրիխ կոդ: Նշվեց, որ անհրաժեշտ է հասկանալ իրավիճակը, հնարավոր է այլ դեպքեր ևս լինեն, ուսումնասիրել և գտնել համապատասխան լուծում:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, թե ինչու պետք է ավտոտեխսպասարկման կետերում արհեստավորները ձեռք բերեն սարքեր, որպեսզի սկանավորեն ավտոյուղը և դա ընդհանուր առմամբ ինչ է տալու: Հաջորդիվ հարցրեց, թե հարկ վճարողի անձնական էջում տեղադրվող ծանուցումները ինչու չեն ուղարկվում հարկ վճարողի հեռախոսահամարին:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ նախատեսվում է բջջային հավելվածի միջոցով սկանավորման հնարավորություն ներքին սպառման համար: Բացի այդ, նույնականացման միջոցներով դրոշմավորումն ապահովում է ապրանքների շարժի հետազոտություն՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչև վերջնական սպառում: Միաժամանակ, եթե յուրն օտարվում է և կիրառվում է հսկիչ դրամարկղային մեքենա, ապա հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով պետք է իրականացվի սկանավորում, իսկ եթե ներառված է մատուցվող ծառայության ինքնարժեքի մեջ, ապա բջջային հավելվածի միջոցով կարող է իրականացվել սկանավորում: Ինչ վերաբերում է հեռախոսահամարին ծանուցումների ուղարկմանը, նշվեց որ կատարվել են որոշակի աշխատանքներ և նախատեսվում է այդ հնարավորությունը:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ. Համբարձումյանը նշեց, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության թեմատիկ ստուգման ժամանակ մինչև ստուգման ժամանակաշրջանը անկանխիկ վճարման դեպքում ՀԴՄ կտրոններ չտրամադրելու խախտումների մասով յուրաքանչյուր դեպքի համար առաջադրվում է առանձին տուգանք, որը բացահայտվում է նախորդ ժամանակաշրջանի բանկային հաշվի քաղվածքների հիման վրա: Կարծում է, որ խիստ անհամաչափ պատասխանատվություն է և առաջարկում է առաջին անգամ նախատեսել նախազգուշացում, իսկ երկրորդով բոլորը միասին արձանագրել մեկ խախտում: Միաժամանակ, նշվեց, որ ՀԴՄ-ի կիրառության ճշտության թեմատիկ ստուգման ժամանակ վերցնելով նախորդ ժամանակահատվածի բանկային հաշվի քաղվածքները և տեսնելով, որ չեն տրամադրվել ՀԴՄ կտրոններ, հնարավոր է առաջադրվեն խոշոր չափի տուգանքներ, նամանավանդ, երբ վճարվել է հարկի գումարը: Մինչդեռ, հսկիչ գնմամբ արձանագրված խախտումների դեպքում տուգանքի չափը ավելի նվազ կլինի:

Նշեց նաև, պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերից ծանուցագրերը և որոշումները, վերահսկվող գործարքների ծանուցումները, ՎԻՎ ծանուցագրերը և որոշումները չեն ուղարկվում հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին:

Հաջորդիվ նշվեց, որ ՊԵԿ ներկայացուցիչների հետ շարունակվում են քննարկումները, թե էլեկտրոնային համակարգում լիազորված անձինք ինչպես կարող են հաշվառվել:

ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ գործող կարգավորումների համաձայն խախտման յուրաքանչյուր դեպք առանձին դեպք է և յուրաքանչյուր դեպքի համար նախատեսված է պատասխանատվություն: Եթե թույլ է տրվել խախտում, չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, պետք է կիրառվի պատասխանատվություն: Նշվեց նաև, որ իրականում միշտ վճարում են այնքան հարկ, որքան ՀԴՄ կտրոն են տրամադրել: Գուցե ինչ-որ բաներ կարելի է քննարկել, սակայն կարգավորումներ չպետք է նախատեսվեն օրենքը խախտողների համար: Ծանուցման հետ կապված հարցի հետ կապված՝ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Գևորգյանը նշեց, որ կուսումնասիրեն:

ՎԶԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհուրդի ներկայացուցիչ Հ. Պատվականյանը հարցրեց, թե արդյոք արդեն գործում է նույնականացման միջոցների փոխճանաչելիությունը: Հաջորդիվ հարցրեց, թե արդյոք կառավարության որոշմամբ գինը որոշելու նախաձեռնություն կա, թե ոչ: Միաժամանակ հարցրեց, թե ինչ թարմացումներ կան ՀՀ կառավարության 25.05.2023թ. N 808-Ն որոշմամբ սահմանված զգայուն ապրանքների արտահանման գործընթացի հետ կապված ավտոմատացված համակարգի ներդրման մասով:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ միայն ջրի մասով կա փոխճանաչելիություն, մյուս ապրանքների մասով դեռ աշխատանքներ են կատարվում: Ինչ վերաբերում է գնի որոշմանը, նշվեց, որ որոշում չկա, կա քննարկում: Ընդ որում, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ուսումնասիրում է գնագոյացումը, որի արդյունքներից ելնելով՝ կառավարության որոշում կլինի, թե գինը ինչպես սահմանել: Համակարգի թարմացումների հարցի հետ կապված՝ նշվեց, որ կա գործընթաց:

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը անդրադառնալով ապրանքների փաստաթղթավորմանը նշեց, որ հատկապես մարզերում շատ տնտեսվարողներ

ահագանգում են, որ խոշոր մատակարարները փաստաթուղթ չեն տրամադրում: Արդյոք հնարավոր չէ վերջիններիս նկատմամբ կիրառել խիստ վարչարարություն, որովհետև շատ դեպքերում իրենք չեն տրամադրում փաստաթուղթ: Հաջորդիվ հարցրեց, թե արդյոք հնարավոր չէ ապրանքի վերադարձն իրականացնել առանց օրիգինալ ՀԴՄ կտրոնի առկայության, օրինակ՝ պատճենի միջոցով:

ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Վ. Մխիթարյանը նշեց, որ հարկային մարմինը վարչարարություն իրականացնում է բոլոր տնտեսվարողների մոտ: Ընդ որում, խիստ վարչարարությունն իրականացվում է առավել ռիսկային համարվող տնտեսվարողների մոտ: Միաժամանակ, շատ դեպքերում խոշոր մատակարարները տրամադրում են փաստաթուղթ, իսկ փոքր տնտեսվարողները չեն վերցնում: ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ վերադարձ կարող է իրականացվել միայն ՀԴՄ կտրոնի առկայության դեպքում, հակառակ դեպքում տնտեսվարողները վերադարձ ձևակերպելու միջոցով հասույթները կթերհայտարարագրեն:

«Համագործակցության նոր ուղի- կիրթ գործարար» կրթական և գործարար կապերի զարգացման կենտրոն ՀԿ ներկայացուցիչ Ա. Արամյանի բարձրացրած հարցը վերաբերում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների վերադարձմանը: Նշվեց, որ շատ դեպքերում տնտեսվարողների մոտ կա այնպիսի կարծիք, որ եթե ունեն դեբետային գումար, ապա ներմուծված ԱԱՀ-ն կարող են վճարում չկատարել, որի արդյունքում հաշվարկվում են տույժեր: Ընդ որում, հաշվարկը ներկայացնելու ժամանակ սկզբում ռիսկային չեն համարվում, սակայն հետո դառնում են ռիսկային: Հարցրեց, թե ինչպես է որոշվում ռիսկային համարվելը: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Վ. Մխիթարյանը նշեց, որ ռիսկային համարվելու չափանիշները սահմանված են կառավարության որոշմամբ: Ընդ որում, եթե հարկ վճարողը համարվում է ռիսկային, ապա կարող է դիմել ուսումնասիրության համար, որից հետո գումարը կմուտքագրվի միասնական հաշվին:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանի բարձրացրած հարցը վերաբերում է ներմուծման ժամանակ վճարված ԱԱՀ-ի հաշվանցման հետ կապված: Նշվեց, քանի դեռ բյուջեի հաշվին չի հաշվեգրվել, չի կարող

հաշվանցվել: Մինչդեռ, հարկ վճարողները տեղյակ չեն, թե երբ է հաշվեգրվում բանկային հաշվին և արդյունքում տուգանվում են:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ ապագայի գաղափարներից է մաքսային վճարների մասով միասնական հաշիվ ունենալը: Նշվեց նաև, որ նշված խնդիրը ֆիքսված է, կուսումնասիրեն խնդիրը, լուծում կգտնեն և հետագայում կտեղեկացնեն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

4/15/2025

X 

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ